Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (ավազանի անունով՝ Սամվել) ծնվել է 1973 թ. օգոստոսի 5-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

1980-1990 թթ. ուսանել է տեղի միջնակարգ դպրոցում:

1990 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1996 թ. մայիսի 19-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1996 թ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:

1997 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Հնդկահայ գաղութը և Մայր Աթոռի նվիրակությունը Հնդկաստանում» թեմայով՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1996-1997 թթ. աշխատել է Վեհարանում որպես քարտուղար:

1997 թ. դեկտեմբերի 14-ին, ձեռամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1998 թ. նշանակվել է Մայր Աթոռի պարեկ:

1999 թ. մարտին Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի կողմից ծառայության է կոչվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի խմբագրությունում՝ որպես գլխավոր խմբագրի պաշտոնակատար:

2000 թ. հունվարին նորընտիր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է նորաստեղծ «Մայր Աթոռ - Թեմեր» գրասենյակի վարիչ-տնօրեն:

2001 թ. հունվարին Հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ:

2001 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Նվիրակությունը Հայոց Եկեղեցում» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի, ստացել է մասնավոր վարդապետական չորս աստիճաններ:

2004 թ. ապրիլից Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ նաև Մայր Աթոռի ներկայացուցիչն է ՀՀ Ազգային Ժողովում:

2004 թ. օգոստոսին պաշտպանության է ներկայացրել «Եպիսկոպոսական իշխանությունը Հայոց Եկեղեցում» ծայրագույն վարդապետական թեզը:

2004 թ. սեպտեմբերի 26-ին, ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: